

ՄԱՏԵՆԱԽՕՍՍԿԱՆ

1. ՄԻ ԳԵՂԵՑԻԿ ԳԻՐԲ

Գիտութիւնը նախատե-
սութիւն է, իսկ նախադէս
գիտենալը օգնում է մար-
դուն ազատուելու զաւթ
շարեքից:

Սպեցսիւր

Պատահմամբ կարգացի մի սիրուն գիրք, որ կրում
է «Գիւղատնտեսական հրատապ հարցեր» վերնագիրը,
հեղ. Աշէրօնի:

Գրքի նպատակն է ապացուցանել, որ մեզ շատ հար-
կաւոր են գիւղատնտեսական դպրոցներ:

Այո: Հային հարկաւոր է կուլտուրական աշխատանք
և գործ:

Հեղինակը գրքի գլխին դրել է յայտնի Մֆիվտի այն
խօսքերը, թէ՛ այն մարդը, որի շնորհիւ երկու ցօղուն է
բուսնում այնտեղ, ուր առաջ միայն մէկն էր բուսնում,
աւելի է նպաստում ժողովրդի բարօրութեան, քան բոլոր
քաղաքագէտներն ու փրկիսոփաները միասին:

Գիւղատնտեսութեան նշանակութիւնը ապացուցանելու
համար հեղինակը յիշում է, որ հին ազգերի հաւատալիք-
ներով հողագործութիւնը աստուածային շնորհ է, որ հին
յիսների կարծիքով Արամազդը առաջին անգամ լուծ դրեց
ջորիների վզին և մարդկանց հողը հերկել սովորեցրեց և
ցորենը ցանեց:

Նոյն իսկ հայրենասիրութիւնը ծագել է հողագործու-
թիւնից:

Այն երկիրը, ասում է հեղինակը, ուր մարդը քըրտինքը ճակատին փորում է գետինը, սերմանում ու հրնձում է, ուր նա խրճիթ է շինում և շտեմարանները պաշարով լցնում, հետզհետե՝ աւելի ու աւելի զրաւում է նրա ուշքն ու միտքը, հմայում է սիրտը ու դառնում է նրա սիրոյ առարկան, այստեղից է ծագում այն ախորժելի զգացմունքը, որ մենք ունենում ենք դէպի մեր ծննդավայրը և հէնց այդ նոյն զգացմունքն է, որ աւելի զարգանալով և աւելի գիտակցական դառնալով, վերջապէս հայրենասիրութիւն է կոչւում: Յայտնի է նոյնպէս, որ հողագործութիւնը մարդուն խաղաղասէր է դարձնում, որ դեռ նշանաւոր Հռոմայեցի Կատոնը նկատել էր և ասել, թէ այդ կոչումը ամենաբարոյական և ամենախաղաղասէր կոչումն է և այն մարդիկ, որ հողագործութեամբ են ըզրադւում, հազիւ են վատ մտածում:

Գիւղատնտեսական գիտելիքների կարևորութեան մասին հեղինակը առարկում է, որ եթէ չգիտէ թէ այս ու այն հունձը ինչ նիւթեր է խլում նրա հողից և թր քանակութեամբ, ապա նա ինչպէս պիտի վերադարձնէ իր հողի կորուստը, թէ պարարտացման թր եղանակն է աւելի հարկաւոր. եթէ նա որոշ չգիտէ, շարունակում է հեղինակը, թէ ի՞նչ նիւթերից և թր քանակութեամբ անհրաժեշտ են ընտանի կենդանիների սննդի համար, կամ թէ այս ու այն սնունդը ինչ ուղղութեամբ է ազդում, արդեօք կաթն է առատացնում, թէ՛ ճարպը, թէ՛ կենդանու ֆիզիքական ուժը: Գիւղացուն հարկաւոր է նոյնպէս հաշուարարութիւն տնտեսութեան մէջ, որպէս և կարևոր է զանազան միջատների և պարազիտների դէմ կռուելու միջոցների գիտութիւնը: Իբրև օրինակ թէ գիւղատնտեսական դպրոցները որքան մեծ օգուտ են բերում ժողովրդին, պ. Աշէրօնը յիշում է Դանիան, ուր $2\frac{1}{2}$ միլիօն ժողովուրդը դպրոցների շնորհիւ մի գիւղական դրախտ է: Այս երկրում եղջիւրաւոր կենդանիների թիւը հասնում է $2\frac{1}{2}$ միլիօնի, իւրաքանչիւր տարի Դանիայից հինգ միլիօն փութ իւղ է արտահանւում Ան-

գլխա, ուր այդ ապրանքը ամենաընտիրն է համարւում և ամենաբարձր գնով ծախւում, քսան միլիօն ըուբլու միս ու մսացու կենդանիներ է արտահանւում:

Վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ իւրաքանչիւր Դանիացի միջին հաշուով ունի խնայողական գանձարաններում հարիւր երեսուն հինգ ըուբլի, իսկ Ռուսաստանում հազիւ եօթ ըուբլի ունի ուսուր:

Ապա հեղինակը խօսում է գիւղատնտեսական դպրոցների մասին զանազան երկիրներում, ապացուցանում է, որ մեր ժամանակի երկրագործը պիտի ունենայ ոչ միայն ամուր թիկունք ու զօրեղ բազուկներ, այլ և լուսաւոր գլուխ:

Յետոյ հեղինակը խօսում է գիւղատնտեսական ձմերային ու լրացուցիչ դպրոցների կարեւորութեան մասին և ցոյց է տալիս այդպիսի դպրոցների ծրագիրը:

Թող մեր նոր դպրոցը, ասում է հեղինակը, հանդիսանայ մի սերմնացան, որ առողջ սերմեր ցանելով մեր գիւղացու հոգեկան աշխարհում, դարձնէ նրա միտքը աւելի զուարթ ու լուսաւոր:

Ներկայ ժամանակ, երբ ամենուրեք հայ գիւղացին տառապում է յետին աղքատութեան մէջ, ամեն մի հայի, մանաւանդ հայ ինտէլիգենցիայի, հայ հոգեւորականի, հայ ուսուցչի և հայ բարերարի պարտականութիւնը պիտի լինի լուրջ կերպով մտածել Աշէրօնի գաղափարների իրագործման համար:

2. Զ Ր Ո Յ Ց Յ Ն Ր

Վ. Փափագեանի

Վրդանէս Փափագեանը շատ վաղուց է գրում, բայց ամենից սակաւ գնահատուած հեղինակներից մէկն է: Փափագեանը շատ ինքնուրոյն գրող է, նրա երկերը բո-